Հավելված N 1
ՀՀ կառավարության 2026 թվականի
հուլիսի 9-ի N 1028 - Ն որոշման

# ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵԼԻՍ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով օտարվող սեփականության նկարագրության արձանագրության կազմումը կատարվում է օտարվող սեփականության լուսանկարահանման, գեոկապակցված օդային լուսանկարահանման և եռաչափ սքանավորում իրականացնելու միջոցով: Նկարագրության արձանագրության կազմման համար օգտագործվող սարքավորումներն են՝

1) անօդաչու թռչող սարքեր՝ դրանց վրա տեղադրված սքանավորման և լույսի միջոցով հայտնաբերման և հեռաչափման (LiDAR) սենսորներ.

2) եռաչափ տարածական տվյալների ստացման համար նախատեսված մասնագիտացված սարքեր (ստատիկ կամ շարժական (մոբայլ) լազերային սքանավորման (LiDAR) համակարգեր (կայաններ).

3) էլեկտրոնային տախեոմետրեր.

4) գլոբալ տեղորոշման համակարգեր (GPS).

5) բարձր լուծաչափով տեսանկարահանման և լուսանկարահանման սարքեր:

2. Սույն հավելվածի 1-ին կետի 1-5-րդ ենթակետերում նշված տեխնիկական սարքավորումներն օգտագործվում են տեղագրագեոդեզիական, քարտեզագրական, կադաստրային, հողաշինարարական, ինժեներաերկրաբանական, տարածական տվյալների հավաքագրման, մշակման և վերլուծության, տարածքների մոնիթորինգի, եռաչափ մոդելավորման, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ նպատակներով:

3. Սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետում նշված անօդաչու թռչող սարքերի կիրառմամբ տվյալների հավաքագրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ՝ ապահովելով թռիչքների անվտանգությունը, օդային տարածքի օգտագործման

կանոնների պահպանումը և երրորդ անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը: Անօդաչու թռչող սարքերը կիրառվում են օրթոֆոտոհատակագծերի, թվային քարտեզների, տեղադրական հատակագծերի, եռաչափ մոդելների ստացման նպատակով:

4. Սույն հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված LiDAR սենսորներով համալրված ստատիկ և շարժական լազերային սքանավորման համակարգերը կիրառվում են տարածքների, շենքերի, շինությունների, ինժեներական ենթակառուցվածքների և այլ օբյեկտների վերաբերյալ եռաչափ տարածական տվյալների ստացման և մշակման նպատակով:

5. Սույն հավելվածի 1-ին կետի 3-րդ և 4-րդ ենթակետերում նշված էլեկտրոնային տախեոմետրերը և գլոբալ տեղորոշման համակարգերը կիրառվում են գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների իրականացման ժամանակ՝ քարտեզների և հատակագծերի կազմման, ինչպես նաև կոորդինատների ստացման և նշահարման նպատակով:

6. Սույն հավելվածի 1-ին կետի 5-րդ ենթակետում նշված բարձր լուծաչափով տեսանկարահանման և լուսանկարահանման սարքերը կիրառվում են տարածքների և օբյեկտների վիզուալ փաստագրման, մշտադիտարկման և համապատասխան տեղեկատվության հավաքագրման նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

10.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ